# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սարալանջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սարալանջ, 091 11 38 38, saralanj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 Հուլիսի 2014թվականի N 12-Ա

## ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԹԻՎ 6 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի՝ **համայնքի ավագանին որոշում է.**

Հաստատել Սարալանջ համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 24-ի թիվ 6 հերթական նիստի օրակարգը.

1. Սարալանջ համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 10-ի N 08-Ա, N 10-Ա, և N 11-Ա որոշումներում փոփոխություններ կատարելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԼՂԱԹՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՕՆԻԿ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄՀԵՐՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝** ԳԵՂԱՄ ՁԻԼԻՖՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՍԱՐԱԼԱՆՋ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Սարալանջ համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Սարալանջ, 091 11 38 38, saralanj.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

24 Հուլիսի 2014թվականի N 13-Ա

### ՍԱՐԱԼԱՆՋ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 08 Ա, N 10-Ա, N 11- Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի պահանջներով՝ **համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 10-ի <<Սարալանջ համայնքի ավագանու թիվ 5 հերթական նիստի օրակարգը հաստաելու մասին>>N 08-Ա որոշման 2-րդ կետում <<հաստաել>> բառը փոխարինել <<համաձայնություն տալ>> բառերով:

2. Համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 10-ի <<Սարալանջ համայնքի հողային հաշվեկշիռը հաստատելու մասին>> N 10-Ա որոշման վերնագրում <<հաստատել>> բառը փոխարինել <<համաձայնություն տալ>> բառերով, որոշման նախաբանի հղումը <<Հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ կմասի 29-րդ կետի պահանջները>> բառերը փոփոխել <<Համաձայն <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 2-րդ կետի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թ. հոկտեմբերի 23-ի թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի, հիմք ընդունելով Սարալանջ համայնքի ղեկավարի առաջարկությունը>> բառերով:

3. Համայնքի ավագանու 2014 թվականի հուլիսի 10-ի <<Համայնքի ղեկավարի 2014 թվականի բյուջեի 2-րդ եռամսյակի կատարման հաշվետվության հաստատման մասին>>N 11-Ա որոշման մեջ <<հաշվետվություն >> բառը փոխարինել <<հաղորդում >> բառով:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԽԼՂԱԹՅԱՆ ԿԱՐԵՆ
2. ՀԱԿՈԲՅԱՆ ՕՆԻԿ
3. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԳԱՌՆԻԿ
4. ՄԱՐՈՒՔՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
5. ՄՀԵՐՅԱՆ ԱՐՏԱԿ

**Համայնքի ղեկավար՝ ԳԵՂԱՄ ՋԻԼԻՖՅԱՆ**